

# ԵՐԵՎԱՆԻ ՆԱՐԱՆԳԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԿԱԶՄԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

գ. Լ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ  
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ХІХ դարի 2-րդ կեսին Արևելյան Հայաստանի պատմական տարածքների մոտ կեսն ընդգրկված էր Երևանի նահանգում, որն ստեղծվեց 1849թ. հունիսի 9-ի իրամանով<sup>1</sup>: Վարչական նոր միավորի ստեղծումը պատճառաբանվում էր իհն-նականում կառավարման համակարգի ծախսերը կրծատելու և եկամուտներն ավելացնելու անհրաժեշտությունով<sup>2</sup>:

Սկզբնական շրջանում նահանգը բաժանվեց իհնգ՝ Երևանի, Նախիջևանի, Նոր Բայազետի, Օրդուբադի և Ալեքսանդրապոլի գավառների: Վերջինիս կազմից հանդի և սկզբնական շրջանում քութայիսի նահանգի Ախալցխայի գավառին<sup>3</sup>, իսկ այնուհետև Թիֆլիսի նահանգին միացվեց Ախալքալաքի տեղամասը, որն ամբողջությամբ բնակեցված էր հայերով: Հիշյալ շրջանը Ալեքսանդրապոլի գավառին էր միացվել 1846 թվականի Այսրկովկասում կատարված վարչական բաժանումների ժամանակ<sup>4</sup>: 1862թ. Ալեքսանդրապոլի գավառից անջատվեց նաև Փամբակի ոստիկանական տեղամասի հյուսիսային մասը, Լոռին, որը նույնպես միացվեց Թիֆլիսի նահանգին: Իսկ 1868թ. նորաստեղծ Ելիսավետպոլի նահանգում ընդգրկվեց Զանգեզուրի տեղամասը, ինչպես և Ղազախի և Շամշադինի տեղամասերը և Օրդուբադի նախկին գավառի որոշ մասը<sup>5</sup>: 1860-ական թվականների վերջին և 70-ականների սկզբին Երևանի նահանգի գավառների թիվը հասավ 7-ի: Նահանգի տարածքը հավասար էր մոտ 26.450 քառ. վերստի, իսկ բնակչության թվաքանակը 1857թ. կազմում էր 256.338 մարդ<sup>6</sup>: Գավառներն իրենց տարածությամբ չպիտի գերազանցեին 6500 քառ. վերստը, իսկ բնակչության քանակով՝ 80.000 մարդուց կամ 10.000 տնտեսությունից<sup>7</sup>:

Նահանգի բնակչությունը, ինչպես և Ուլուսական կայսրության, բաժանվում էր դասերի: Յուրաքանչյուր դասի իրավունքները և պարտականություններն ամ-

<sup>1</sup> Полное собрание законов Российской империи (այսուհետև՝ ПСЗРИ), собрание II, т. 24, с. 312. Акты собранные авказскою Архиграфической комиссио (այսուհետև՝ АКАК), т. 10, с. 46.

<sup>2</sup> АКАК, т. 10, сс. 875-876.

<sup>3</sup> Кавказский календарь на 1852 год, Тифлис, 1851, отл. III, с. 292.

<sup>4</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 332, ց. 1, գ. 715, թ. 2:

<sup>5</sup> Ռախատունյան Ա. Ադմіністративныј передел Закавказского края, Тифлис, 1918, сс. 84-85. Հայոց թորաման Թ. Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 427-428:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 125, ց. 9, գ. 8, թ. 1:

<sup>7</sup> Отчет по главному управлению наместника авказского за первое десятилетие управление авказским и Закавказским краем его императорским высочеством Великим князем Михаилом Николаевичем, 6 декабря 1862 – 6 декабря 1872 гг., Тифлис, 1873, сс. 49-50, Հայ ժողովորի պատմություն, հ. VI, Երևան, 1981, էջ 15:

րագրված էին օրենսդրությամբ: Դասերը բնորոշ են ֆեռդալական հասարակարգին և կայուն միավորներ էին: Նրանցում հազվադեպ էր անցում կատարվում մեկից-մյուսը:

Ինչպես Ռուսական կայսրությունում, այնպես էլ Արևելյան Հայաստանում բնակչությունը բաժանվում էր արտոնյալների և հարկատուների դասերի: Վերջինիս արտոնյալ դասերի իրավունքները ցարական կառավարությունը վերջնակաանպես ճանաչեց 1866 թվականից<sup>8</sup>, երբ նրանց սկսեցին գինվորական և պետական ծառայության ընդունել ռուսական ազնվականությանը հավասար իրավունքներով: Երևանի նահանգի արտոնյալ դասերին պատկանում էին ժառանգական և անձնական ազնվականները, խանները, բեգերը, մելիքները, աղալարները, զանազան դավանանքի հոգևորականները: Այդ ժամանակաշրջանի ուսումնասիրողներից մեկը՝ Եղիազարովը<sup>9</sup>, մելիքներին ու բեգերին բաժանում է երեք խմբի: Առաջին խումբը ժառանգական հին մելիքներն ու բեգերն էին, որոնց կոչումները շնորհվել էին պարսկական շահերի կողմից, հատուկ իրովարտակով: Երկրորդ խումբը տեղական խանների կողմից այդ աստիճաններին բարձրացվածներն էին: Երրորդ խմբի ներկայացուցիչները գյուղերի, համայնքների կառավարիչներն էին և որոշ արտոնություններից օգտվում էին միայն տվյալ ժամանակաշրջանում: Նրանք ըստ էության մելիքներ ու բեգեր չէին և ոչ էլ այդ կոչումները հաստատող որևէ իրովարտակ ունեին: Այս վերջին խումբն ըստ էության կապ չուներ մելիքների ու բեգերի դասի հետ և միայն տեղական ժողովուրդն էր նրանց այդպես կոչում: Այնպես որ, կարծում ենք, շատ ավելի ճիշտ կլիներ նրանց երկու խմբի բաժանել:

Դիտարկենք առաջին հերթին արտոնյալ՝ ոչ հարկատու դասերի թվաքանակը և տեղաբաշխումը Երևանի նահանգում, նշված ժամանակահատվածում:

Երևանի նահանգի և Անդրկովկասի փոխարքայության վիճակագրական կոմիտեների հավաքած տվյալների համաձայն 1864թ. նահանգի բնակչության ընդհանուր թվաքանակը կազմել է 437.365 մարդ, որից 6.649-ը՝ զորքը<sup>10</sup>: Քանի որ զորքը նահանգի բնակչության օրգանական նասը չէր կազմում, ուստի բնակչության ռեալ քանակը պետք է դիտարկել 430.716 մարդ: Բնակչության նշված թվաքանակից 54,27%-ը՝ արական սեռի ներկայացուցիչներ էին, մնացած 45,73%-ը՝ իգական: Արական սեռի ներկայացուցիչները ավելի էին նաև նահանգի բոլոր գավառներում: Նահանգում բնակչությունը տեղաբաշխված էր ըստ գավառների հետևյալ հարաբերակցությամբ (տես՝ աղյուսակ թիվ 1):

<sup>8</sup> ՊԾՅՐԻ, տ. XI, ս. 321.

<sup>9</sup> *Егiazаров С. А.* Административно-экономический строй сельской общины Эриванской губернии. — Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, т. I, Тифлис, 1887, с. 3.

<sup>10</sup> ՀԱԱ, ֆ. 125, գ. 1, գ. 8, թ. 74:

**Երևանի նահանգի բնակչության թվաքանակը և տեղաբաշխումն ըստ գավառների  
1864 թվականին**

Գավառներ	Բնակչության թվաքանակը			
	արական	իգական	ընդամենը	%-ը ընդհանուրի նկատմամբ
Երևանի	48.791	42.652	91.443	21.23
Ալեքսանդրապոլի	41.429	38.104	79.533	18.47
Նախիջևանի	28.512	23.972	52.484	12.19
Օրորուբաղի	18.834	14.676	33.510	7.78
Նոր Բայազետի	42.887	30.105	72.992	16.95
Էջմիածնի	53.296	47.458	100.754	23.39
Ընդամենը	233.749	196.967	430.716	100

Ինչպես Երևում է ներկայացված աղյուսակից, Երևանի նահանգի բնակչությունը գավառներում տեսաբաշխված էր խիստ անհամաշափ: Ընդհանուր թվաքանակի (430.716 մարդ) 23,39%-ը (100.754 մարդ) բաժին է ընկնում Էջմիածնի գավառին, 21,23%-ը՝ (91.443 մարդ) Երևանի գավառին: Բնակչության թվաքանակով (79.533 մարդ) Երրորդ տեղը (18,47%-ով) զբաղեցնում է Ալեքսանդրապոլի գավառը, չորրորդը՝ 16,95%-ով (72.992 մարդ) Նոր Բայազետի գավառը: Նախիջևանի գավառին բաժին էր ընկնում Երևանի նահանգի բնակչության ընդհանուր թվաքանակի 12,19%-ը (52.484 մարդ): Սակավաքանակ էր Օրորուբաղի գավառի բնակչությունը՝ ընդամենը 7,78% (33.510 մարդ):

Տնտեսական բույլ զարգացածությունը, արյունաբերության կարելի է ասել բացակայությունը պայմանավորում էին Երևանի նահանգի քաղաքային բնակչության սակավաքանակությունը: Նահանգի հինգ քաղաքներում բնակվում էր ընդամենը 44.402 մարդ<sup>12</sup> (տես աղյուսակ թիվ 2), որը կազմում էր բնակչության ընդհանուր թվաքանակի 10,31%-ը: Քաղաքային բնակչության ընդհանուր թվաքանակից 23.702-ը պատկանում էր արական (53,38%), իսկ 20.700-ը՝ իգական սեռին (46,62%): Նշենք, որ նահանգի գավառների բնակչության համեմատությանը քաղաքային բնակչության սեռային կառուցվածքում տարբերությունը մի փոքր ավելի քիչ է: Դա թերևս կարելի է բացատրել գյուղական բնակչության ցածր կենսամակարդակով և հատկապես իգական սեռի ներկայացուցիչների ֆիզիկական ծանր աշխատանքներում ավելի լայն ընդգրկումով:

<sup>11</sup> Աղյուսակը կազմված է հետևյալ աղբյուրների վիճակագրական տվյալների հիման վրա. ՀԱԱ, ֆ. 125, գ. 1, գ. 8, թ. 74, Վրաստանի պատմության արխիվ (այսուհետև՝ ՎՊԱ), ֆ. 415, գ. 3, գ. 95, թթ. 76-77: Ուսումնասիրողներից Ա. Ս. Չայրապետյանը “Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIX-XX դարի սկիզբը) փաստաթղթերի և նյութերի ժողովածու”, Երևան, 2011, էջ 87, արժեքավոր աշխատանքում, հավանաբար շփոթելով 0-ի և 6-ի, 4-ի և 7-ի ձեռագրային որոշ նմանությունները, իր կազմած աղյուսակում Երևանի, Նոր Բայազետի և Էջմիածնի գավառների համար ներկայացրել է այլ տվյալներ, ուստի և նահանգի բնակչության թվաքանակը ստացվել է իրականից մոտ 3.000-ով պակաս:

<sup>12</sup> ՀԱԱ, ֆ. 125, գ. 1, գ. 8, թ. 74, ՎՊԱ, ֆ. 415, գ. 3, գ. 95, թ. 76:

**Քաղաքային բանկչության թվաքանակը և տեղաբաշխումը Երևանի նահանգում  
1864թ.-ին**

Քաղաքներ	Բնակչության թվաքանակը			
	արական	իգական	ընդամենը	%-ը ընդհանուրի նկատմամբ
Երևան	6.744	5.768	12.512	28.18
Ալեքսանդրապոլ	8.762	7.787	16.549	37.27
Նախիջևան	3.363	2.844	6.205	13.97
Օրբուրադ	2.511	2.047	4.558	10.27
Նոր Բայազետ	2.322	2.256	4.578	10.31
Ընդամենը	23.702	20.700	44.402	100

Բնակչության թվաքանակով առաջին տեղը շարունակում էր գրադեցնել Ալեքսանդրապոլ՝ 16.549 մարդ, որը կազմում է նահանգի քաղաքային բնակչության 37,27%-ը: Հաջորդում է նահանգի կենտրոն Երևանը՝ 12.512 մարդ (28.18%-ը): Հարկ է նկատել, որ Երևանի բնակչությունը տարիների ընթացքում աճում էր շատ աննշան քանակով, կամ որոշ տարիներին՝ նույնիսկ նվազում:

Նշենք, որ 1850թ. քաղաքն ունեցել է 12.850 բնակիչ<sup>14</sup>, ավելի, քան 1864 թվականին, իսկ նույն ժամանակահատվածում Ալեքսանդրապոլի բնակչությունը 11.519 մարդուց, որից մշտական՝ 11.280-ը<sup>15</sup>, հասել էր, ինչպես նշեց, 16.549 մարդու՝ աճելով 5.030 մարդով: Ալեքսանդրապոլը գավառային քաղաքի իրավունքներից օգտվում էր 1840թ. սկսած: Հարկ է նկատել, որ Ռուսական կայսրությանը միանալուց հետո, ավելի քան կես դարի ընթացքում, մինչև 1886թ. Երևանի բնակչությունն ավելացավ ընդամենը 3.275 մարդով, երբ դարի 30-ական թվականներին Երևանն իր բնակչությամբ Անդրկովկասի երրորդ քաղաքն էր<sup>16</sup>: Միայն դարի վերջին տասնամյակներին Երևանի բնակչությունը սկսեց արագորեն աճել:

Ընդ որում, Երևանի և Ալեքսանդրապոլի բնակչության թվաքանակը միասին 1864թ. կազմում է նահանգի քաղաքային բնակչության 65,45%-ը: Նախիջևան, Օրբուրադ և Նոր Բայազետ (քաղաք էր դարձել 1850 թվականից) քաղաքներին բաժին էր ընկնում միայն 35,55%-ը (համապատասխանաբար՝ 13,97%, 10,27% և 10,31%): Նախիջևան և Օրբուրադ քաղաքների բնակչությունը, թեև Նախիջևանն իր հերթին Ռուսական կայսրության և Պարսկաստանի միջև կատարվող առևտորի հանգույց էր, ավելանում էր դանդաղ:

Ամեն դեպքում, XIX դարի 2-րդ կեսի սկզբներին, ինչպես վկայում են վիճակագրական տվյալները, քաղաքային բնակչության տեսակարար կշիռը շարունակում էր մնալ ցածր, իսկ քաղաքային կյանքը՝ թույլ զարգացած: Երևանի նա-

<sup>13</sup> Հաշվարկները կատարվել և աղյուսակը կազմվել է ՎՊԱ, ֆ. 415, գ. 3, գ. 95, թթ. 76-77, ՀԱԱ, ֆ. 125, գ. 1, գ. 8, թ. 74 տվյալների հիման վրա:

<sup>14</sup> Кавказский календарь на 1851г., Тифлис, 1850, отл. III, с. 112.

<sup>15</sup> Кавказский календарь на 1852г., Тифлис, 1851, отл. III, сс. 277-278.

<sup>16</sup> Խոջաբեկյան Վ. Ե., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաբաշխում XIX-XX դարերում, XXI դարի շեմին, Երևան, 2002, էջ 61:

հանգը շարունակում էր մնալ գյուղատնտեսական նահանգ, որի բնակչության մեջ մասը զբաղվում էր հողագործությամբ և անասնապահությամբ:

Թերևս կարելի է առանձնացնել Ալեքսանդրապոլը, որը համեմատաբար աշխատ առևտրական կապեր ուներ Թիֆլիսի, Կարսի և Էրզրումի հետ, և որի արհեստագործական բարձրորակ ապրանքները՝ ըստ գավառապետի ներկայացրած հաշվետվության, սպառվում էին ինչպես Երևանի նահանգում, այնպես էլ Անդրկովկասում և Թուրքիայում: Ներքին և արտաքին շուկաներում Ալեքսանդրապոլ քաղաքի տարեկան շրջանառությունը 1864թ.-ին կազմել է 111.500 արժաք ռուբլի<sup>17</sup>:

Ինչպես արդեն նշվեց, Ռուսական կայսրությունում, բնականաբար նաև Երևանի նահանգում, բնակչությունը բաժանվում էր դասերի, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր իրավունքներն ու պարտականությունները: Արիսիվային տվյալների հիման վրա Ա. Ս. Հայրապետյանի ներկայացրած աղյուսակի համաձայն, Երևանի նահանգի բանկչությունը 1864թ. ըստ դաշտանքի և դասերի ուներ հետևյալ պատկերը (տես աղյուսակ թիվ 3)<sup>18</sup>:

Աղյուսակ թիվ 3  
Երևանի նահանգի բնակչությունն ըստ դասերի և դաշտանքի

Դաշտանքներ	Տարածքներում աճացածածուն	Աջևնապահածուն	Խոշորականուն	Խանք	Վեցակտականածուն և քանակ	Մենաթվուն	Աղյուսականածուն	Աղյուսականածուն գույնացրուն	Հայոցական բնակչություն գույնացրուն	Ընդունակություն
ուղղափառ	116	163	60	-	-	-	-	-	1983	-
հայ առաքելական	39	386	3221	-	-	251	7	2400	228206	-
հայ կաթոլիկ	12	9	66	-	-	-	-	-	3257	-
հռոմեակաթոլիկ									457	-
աղանձավոր									3469	-
շիա մահմեդական	-	-	18	-	116	-	-	-	3593	-
սունի մահմեդական	-	2	1337	144	3136	-	79	-	156732	3444
մովսիսական	-	-	-	-	-	-	-	-	-	13762
կռապաշտ	-	-	-	-	-	-	-	-	1980	2271
Ընդամենը	167	560	4702	144	3252	251	86	2400	399677	19477

Ըստ էության, սույն աղյուսակը, բնակչության դասային բաժանման առումով, ունի որոշակի թերություններ: Աղյուսակում ընդգրկված է նաև գինվորական դասը, սակայն զրոքը, ինչպես նշվեց, Երևանի բնակչության օրգանական մասը չէր կազմում և տվյալ դեպքում՝ բնակչության դասային բաժանման ժամանակ նրա դիտարկումը, կարծում էն, ճիշտ չէ: Ճիշտ չէ նաև գինվորականներին և բեգերին, ինչպես նաև՝ քաղաքային բնակչությանը և պետական գյուղացիությանը նույն դասում ընդգրկելը: Վերջիններս ունեին զանազան իրավունքներ, տարբեր պարտականություններ և բաժանված էին տարբեր դասերի: Վերջիններջո, բնակչու-

<sup>17</sup> ՀԱԱ, ֆ. 125, գ. 1, գ. 4, մաս II, թ. 225:

<sup>18</sup> ԿՊԱ, ֆ. 415, գ. 3, գ. 95, թթ. 78-80: Տես Ալեքսանդրապոլի գավառը վիճակագրական նյութերում (XIXդ.-XXդ. սկիզբ): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու՝ աշխատասիրությամբ Ա. Ս. Հայրապետյանի, Երևան, 2011, էջ 87-88:

թյան դիտարկումը քաղաքայինի և գյուղականի վերաբերում է հորիզոնական, իսկ դասայինը՝ ուղղաձիգ բաժանման:

Երևանի նահանգի վիճակագրական կոմիտեի բնակչության վերաբերյալ հավաքած տվյալները թույլ են տալիս ավելի ռեալ, ճշգրիտ պատկերացում կազմել բնակչության թվաքանակի, դասային բաժանման, տեսակարար կշռի և տեղաբաշխման վերաբերյալ (տես այսուսակ թիվ 4):

Ինչպես երևում է այսուսակից, արտոնյալ դասերի ընդհանուր թվաքանակը կազմում է 9.619 և ոչ թե 9.719 մարդ,<sup>19</sup> ինչպես նշված է Երևանի նահանգի վիճակագրական կոմիտեի հաշվետվությունում: Նշված թվաքանակը կազմում է նահանգի ընդհանուր բնակչության (առանց զորքի՝ 430.716 մարդ) 2,23%-ը: Արտոնյալ դասերի հետ միասին հարկերից և պարհակներից ազատված էն նաև աղի արդյունահանմամբ զբաղված 2.400 պետական գյուղացիներ: Այսպիսով, հարկերից և պարհակներից ազատվածների ընդհանուր թվաքանակը 12.019 մարդ էր, որն էլ, իր հերթին, կազմում է, արդեն բնակչության 2,8%-ը: Արտոնյալ դասերի ընդհանուր թվաքանակում ամենամեծ տեսակարար կշռոն ունի հոգևոր դասը՝ 5.159 մարդ (53,63%): Թվաքանակով երկրորդ տեղը զբաղեցնում են բեգեր՝ 3.138 մարդ (32,62%): Մնացած դասերի հետ համեմատած թվաքանակով առանձնանում է ժառանգական և անձնական ազնվականների դասը՝ 725 մարդ (մոտ 8%): Խաները, մելիքները և աղալարները փոքրաքանակ էն (համապատասխանաբար 144, 251 և 79 մարդ):

Երևանի նահանգի հարկատու դասեր՝ անձնական և ժառանգական պատվավոր քաղաքացիները, առևտուրականները, քաղքենիները, պետական և այլ կարգի գյուղացիները կազմում էն բնակչության բացարձակ մեծամասնությունը: Ցավոք, վաճառականների դասը հաշվարկված է թերի, ընդամենը 2 մարդ, որը բնականաբար անհնարին էր: Անձնական և ժառանգական քաղաքացիների մասին որևէ տեղեկություն չի հաղորդվում: Նույնը վերաբերում է նաև քաղքենիների դասին: Մնացած հարկատու դասերից, ըստ նշված հաշվետվության, 42.563-ը (22.689-ը՝ արական, 19.874-ը՝ իգական սեռի) բնակչում էն քաղաքներում, իսկ 359.468-ը (195.296-ը՝ արական, 164.172-ը՝ իգական սեռի՝ գյուղերում<sup>20</sup>: Ցավոք, գյուղացիությունը հաշվարկված է ընդհանուր՝ “Կրետեան գուցարժութեան համար առաջարկություն” սյունակում և հնարավոր չէ առանձնացնել մուլքադարական, թիուլային, վանքապատկան, սեփականատիրական ենթադսերը:

Երևանի նահանգի բնակչության մնացած մասն ասորիներ էն, քոչվոր և կիսանստակաց քրդեր և զնչուներ, որոնք ընդհանրապես հողագործությամբ չեն զբաղվում:

Այսպիսով, հարկատու դասերի ընդհանուր թվաքանակը կազմում էր 418.697 մարդ, կամ բնակչության 97,20%-ը:

XIX դարի 80-90-ական թվականներին Արևելյան Հայաստանում համեմատաբար նորմալ պայմաններ էն ստեղծված բնակչության հետագա աճի համար: Հարկավ, բնակչության աճը և նրա կառուցվածքային փոփոխությունները տվյալ երկրի զարգացման ցուցանիշներից են:

<sup>19</sup> Տես ՀԱԱ, ֆ. 125, գ. 1, գ. 8, թ. 74:

<sup>20</sup> ՅԱԱ, ֆ. 125, գ. 1, գ. 8, թ. 101:

**Եղևանի ճահանգիր բնակչության դասային կազմը և տեղաբաշխումը 1864 թվականին**

Գվալառներ	Հարկերից և պարհավունելից ազատված դասեր										Կողման	Ուղարման									
	Ժամանակամ և անձնավայրեց			Խամեր			Բեգեր			Սելիքմոր	Աղաջաներ										
ար.	ից.	լից.	ար.	ից.	լից.	ար.	ից.	լից.	մ.մ.	ար.	ից.	մ.մ.	ար.	ից.	մ.մ.						
Եղևանի	193	154.	347	16	17	33	507	485	972	20	21	41	-	-	499	457	956	1235	1114	2349	
Ալեքսանդրոսայի	171	122.	293	-	-	-	-	-	-	12	12	24	705	556	1261	888	690	1578			
Սահմանամի	11	15.	26	35	32	67	320	225	545	-	-	-	-	-	398	309	707	764	581	1345	
Օղուբայի	5	3	8	-	-	-	826	548	1374	98	64	162	-	-	280	189	469	1209	804	2013	
Լոր Բայազետի	15	16.	31	-	-	7	8	15	17	18	35	32	23	55	322	194	516	393	259	652	
Էջմիածնի	11	9	20	20	24	44	108	124	232	4	9	13	-	-	435	358	793	578	524	1102	
Ընդհանուր	406	319	725	71	73	144	1768	1370	3138	139	112	251	44	35	79	2639	2063	4702	5067	3972	9039***
	725*	144	3138	3138	251	79	4702**	4702**	4702**												

\* - Աշված թվաքանակից 167-ը ժամանակական ազմականություն է կը արագագ սերման՝ 108, իգական՝ 59): Կրտսեցից 63-ը բմակալուն է կը Եղևանի, 1-ը՝ Նախիջևան, 98-ը՝ Ալեքսանդրոսայի քաղաքինություն, 4-ը՝ Էջմիածնի և 1-ը՝ Ալեքսանդրոսայի գավառներուն: Steu' ֆ. 125, գ. 1, գ. 8, թ. 100:

\*\* - Աշված թվաքանակին պետք է ավելացնել հոռոմեակարուկավան դաշտանաքին պատկանողներին՝ թվով 457, որոնք հաշվարկված չեն: Steu' ՀԱԱ, ֆ. 125, գ. 1, գ. 8, թ. 74, ՎՊԱ, ֆ. 415, գ. 3, գ. 95, թ. 78-80: Այսպիսով, իրգություն դասին պատկանողների ընդհանուր թվանակը կազմուն է 5159 մարդ:

\*\*\* - Ընդհանուր թվաքանակին պետք է ավելացնել մասն Եղևանի, Ալեքսանդրոսայի և Էջմիածնի գավառներուն ապար թվով 116 զիմսկորական աստիճան ունեցող քույրերն և թվով 7 բժգիքին: Այսպիսով, Եղևանի ճահանգիր արտօնությունուն թվաքանակը կազմուն է 9,619 մարդ և ոչ թէ 9,719 մարդ, ինչպես նշված է Եղևանի ճահանգիր վիճակագրական կոմիտանի հաշվառվությունուն (տես՝ ֆ. 125, գ. 1, գ. 8, թ. 74): Հարկերից և պարհավունելից ազատված է կը ճահանգիր պարագաներ կազմուն է 2,400 պետական գրաւունաժողով 12.019 նարդ:

<sup>21</sup> Աղյուսակը կազմված է հետևյալ աղյուղուների վիճակագրական տվյալների հիմնա վրա. ՀԱԱ ֆ. 125, գ. 1, գ. 8, թ. 74, 100: ՎՊԱ, ֆ. 415, գ. 3, գ. 95, թ. 78-80:

Միևնույն ժամանակ չլինելով հասարակության զարգացման վճռական գործոն՝ բնակչության աճը, որպես ընդհանուր օրինաչփություն, նպաստում է արտադրության, արտադրողական ուժերի հետագա զարգացմանը: Արտադրության ամեն մի եղանակին իրականում հատուկ են բնակչության առանձին պատճական բնույթ ունեցող օրենքներ:

Բացի տնտեսական գործոններից, որոնք միջանկյալ ձևով են ազդում, բնակչության աճը պայմանավորված է բազմաթիվ այլ հանգամանքներով: Դարի 90-ական թվականներին Արևելյան Հայաստանում պարբերաբար կրկնվող անբերդիություններն ու սովոր բացասական ազդեցություն էին ունենում բնակչության բնական աճի վրա: Արևելյան Հայաստան աչքի էր ընկնում նաև սակավահողությանը, որի հետևանքով առաջանում էր «ագրարային գերբնակչություն»:

Բացի այդ, կապիտալիզմի բույլ զարգացման հետևանքով «ավելորդ» բնակչության մեծ մասն աշխատանք էր փնտրում Արևելյան Հայաստանի սահմաններից դուրս: Կապիտալիզմն անհրաժեշտորեն ստեղծում էր բնակչության շարժունակություն, որը չէր պահանջվում հասարակական տնտեսության նախկին համակարգերի կողմից և քիչ թե շատ լայն չափերով անկարելի էր այդ ժամանակ: Արտագաղթող բնակչությունը մեծ մասամբ կենտրոնանում էր տնտեսապես ավելի զարգացած շրջաններում, հատկապես Թիֆլիսում և Բաքվում, որտեղ աշխատուժի կարիքը շատ ավելի մեծ էր:

Այսպիսով, արտագնացությունը և դրան գումարած արտագաղթը, որոնք սկսեցին ուժեղանալ հատկապես 90-ական թվականներից, չին կարող իրենց բացասական ազդեցությունը չթողնել բնակչության բնական աճի վրա: Ըստ պաշտոնական տվյալների՝ միայն Երևանի նահանգից XIX դարի վերջին արտագնացների թիվը տարեկան հասնում էր 10-15 հազարի: Բայց շատ ուսումնասիրողներ կասկածի տակ են վերցնում այդ տվյալները, քանի որ դրանց համար իհմք են ծառայել տրված անձնագրերը, այնինչ շատերը մեկնում էին գյուղական ավագների վկայագրերով<sup>22</sup>: Չնայած նշված հանգամանքներին՝ Երևանի նահանգում բնակչության և բնական, և մեխանիկական աճը չէր դանդաղում: Ուստանանում կապիտալիստական հարաբերությունների խորացումը, Կովկասի, ինչպես նաև Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացումը չին կարող չնպաստել բնակչության՝ հատկապես բնական աճի արագացմանը:

Արևելյան Հայաստանի բնակչությունն աճում էր նաև մեխանիկական փոփոխությունների հաշվին: Իհարկե, այդ շրջանում մեխանիկական աճը, որը պայմանավորված էր իհմնականում Արևմտյան Հայաստանից կատարվող ներգաղթով, 80-ական թվականների երկրորդ կեսին և 90-ական թվականների առաջին կեսին նվազել էր, բայց շարունակում էր իր ները խաղալ:

Պաշտոնական տվյալների համաձայն, բնակչության քանակը Երևանի նահանգում 1880-1981 թվականներին հավասար էր 563.047 մարդու<sup>23</sup>: 1882 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, բնակչությունը ավելանում է 6.823

<sup>22</sup> Տե՛ս **Бадалян А.** Население Армении со временем присоединения ее к России до наших дней. – Известия общественных наук АН Арм. ССР, 1953, N 5, с. 60. **Խոջարեևյան Վ. Ե.**, Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Երևան, 1979, էջ 63:

<sup>23</sup> ԱԳԻԱ ԳՐ, գ. 5, օպ. 1, ձ. 7063, լ. 2.

մարդով կամ 1,2%-ով, կազմելով 569.870 մարդ<sup>24</sup>: 1884-1885 թթ. բնակչության տարեկան աճը մեծանում է՝ կազմելով մոտ 1,7%, որի հետևանքով էլ 1886 թվականի ընտանեկան ցուցակագրության տվյալների համաձայն նահանգում բնակչության քանակը հասնում է 670.405-ի<sup>25</sup>: Հինգ տարվա ընթացքում բնակչությունը ավելանում է 107.358 մարդով, կամ 19,06%-ով: Տարեկան միջին աճը կազմում է 3,81%: Այդ բարձր տոկոսը ցույց է տալիս, որ նշված տարիներին Երևանի նահանգում բնական աճի հետ միասին բավականին դեռ է խաղացել նաև մեխանիկականը:

Դարի 90-ական թվականների առաջին տարիները Երևանի նահանգում անբերի էին: Դրա հետևանքով նվազում են բնակչության աճի տեմպերը՝ միայն մի փոքր գերազանցելով տարեկան մեկ տոկոսի սահմանները: Բնակչության աճը դանդաղեցնում էր նաև ամուսնական տարիքի հասած տղամարդկանց, տեղում աշխատանք չգտնելու պատճառով, արտագնացության մեկնելը, որոնց մի մասը չէր վերադառնում: Սակայն նշված Երևույթները կարող էին միայն դանդաղեցնել բնակչության աճի տեմպերը:

Երևանի նահանգում 1897 թվականին բնակչության քանակը ռուսական առաջին մարդահամարի տվյալների համաձայն արդեն հավասար էր 829.556 մարդու<sup>26</sup>, տասը տարվա ընթացքում ավելանալով 159.151 մարդով, կամ 23,73%-ով<sup>27</sup>: Տարեկան միջին աճը կազմել է 2,4%, որը բավականին բարձր ցուցանիշ է: Դարի վերջին Երևանի նահանգում բնակչության քանակը հասնում է 853.404 մարդու<sup>28</sup>:

Այսպիսով, երկու տասնամյակի ընթացքում բնակչությունը Երևանի նահանգում ավելանում է 290.357 մարդով, կամ աճում է 51,56%-ով: Տարեկան միջին աճը կազմել է 2,7%: Նշենք, որ 1880-1897 թթ. Ռուսական կայսրությունում բնակչությունը աճել է ընդամենը 20,43 %-ով<sup>29</sup> Երևանի նահանգի աճին զիջելով նոտ 2,5 անգամ:

Բնակչության տեղաբաշխումը Երևանի նահանգում ըստ գավառների ուներ հետևյալ տեսքը (այսուսակ թիվ 5, տրվում է ըստ 1886 և 1897 թթ., տվյալների, քանի որ դրանք ավելի հավաստի են):

<sup>24</sup> РГИА СПб, ф. 1284, оп. 223, д. 151, л. 2. авказский календарь на 1884 г., отл. III, с. 291.

<sup>25</sup> Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Тифлис, 1893.

<sup>26</sup> Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., т. LXXI. Эриванская губерния, СПб, 1905, с. 1.

<sup>27</sup> Сборник статистических сведений по Закавказскому краю, ч. I, Тифлис, 1902 г., էջ 17-ում տրված է 20%, որը ճիշտ չէ:

<sup>28</sup> РГИА СПб, ф. 1263, оп. 2, д. 5551, л. 270.

<sup>29</sup> Кавказский календарь на 1910 г., с. 146. **Իշխանյան Բ.**, Կովկասյան ժողովուրդների ազգաբնակչական կազմը, պրոֆեսիոնալ խմբավորումը և հասարակական շերտավորումը, Թիֆլիս, 1914, էջ 30:

Գավառները	1886		1897	
	բնակչութ.	տոկոսը	բնակչութ.	տոկոսը
Երևանի	113.614	16,96	150.879	18,19
Ալեքսանդրապոլի	135.731	20,25	165.503	19,95
Էջմիածնի	100.591	15,00	124.237	14,98
Նախիջևանի	84.020	12,53	100.771	12,15
Նոր Բայազետի	103.611	15,45	122.573	14,78
Սուլմալուի	71.066	10,60	89.055	10,73
Շարուր-Դարալագյաղի	61.772	9,21	76.538	9,22
Ընդամենը	670.405	100	829.556	100

Ինչպես Երևում է այլուսակից, XIX դ. 80-ական թթ. բոլորից շատ բնակչություն է ունեցել Ալեքսանդրապոլի գավառը՝ 20,25%, բոլորից քիչ՝ Շարուր-Դարալագյաղինը՝ 9,21%: Քիչ էր բնակչությունը նաև Սուլմալուի գավառում՝ 10,6%: Մնացած գավառների բնակչության քանակում եղած տարբերությունը մեծ չէ և նրանց բաժին է ընկնում 12-ից մինչև 16 տոկոսը:

90-ական թվականներին բնակչության տեղաբաշխումը Երևանի նահանգում, ըստ գավառների, էական փոփոխություն չի կրում: Բացառություն է կազմում միայն Երևանի գավառը, որի բնակչության տեսակարար կշիռը մնացած գավառների համենատությամբ գնալով ավելանում է՝ միտուն ունենալով գերազանցելու Ալեքսանդրապոլի գավառի բնակչության քանակը:

1880-ական թթ. քաղաքային բնակչությունն Արևելյան Հայաստանում թույլ էր զարգացած: Դա բացատրվում էր ինչպես Երևանի տնտեսական զարգացման ընդհանուր մակարդակով, այնպես էլ բուն քաղաքներում արոյունաբերական համեմատաբար խոշոր ձեռնարկությունների սակավությամբ, որոնք հիմնականուն կենտրոնացված էին քաղաքներից դուրս (Ալավերդի, Չանգեզուր): Գյուղատնտեսական «ավելցուկ» բնակչությունը, ինչպես նշվեց, կլանվում էր գերազանցապես Անդրկովկասի խոշոր քաղաքների՝ Թիֆլիսի ու Բաքվի կողմից:

Այսուհենդերձ քաղաքային բնակչությունն աճում էր ավելի արագ, քան գյուղականը: 1886-1897 թթ. Երևանի նահանգում քաղաքային բնակչությունն աճել է 41,5%-ով, իսկ գյուղականն ընդամենը 17,7%-ով (ընդհանուր բնակչությունն աճել է մոտ 20,3% -ով)<sup>31</sup>: 1886 թվականին Երևանի նահանգի հինգ քաղաքներում բնակվում էր 57.594 մարդ, որը կազմում էր ընդհանուրի 8,6%-ը: Երևանի նահանգում քաղաքային բնակչության ածի մասին ավելի մանրամասն տեղեկանալու համար դիտարկենք թիվ 6 այլուսակը<sup>32</sup>.

<sup>30</sup> Այլուսակը կազմված է հետևյալ աղբյուրների տվյալների հիման վրա. Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г., Тифлис, 1893. Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., т. LXXI. Эриванская губерния, СПб, 1905, с. 1.

<sup>31</sup> Յաջ ժողովողի պատմություն, հ.6, Երևան, 1981, էջ 20:

<sup>32</sup> Այլուսակները կազմված են Свод статистических данных ..., Первая всеобщая перепись ..., LXXI, Эриванская губерния, СПб, 1905, сс. 1-2; LXIV, Карсская область, тетрадь I, СПб, 1900, с. 1;

Քաղաքներ	Երևանի նահանգ		
	1886թ.	1897թ	աճը %-ով
Երևան	14.738	29.006	96,8
Ալեքսանդրապոլ	24.230	30.616	26,4
Ն.Քայազետ	7.488	8.486	13,3
Նախիջևան	6.939	8.790	26,7
Օրդուբադ	4.199	4.611	9,8
Ընդամենը	57.594	81.509	41,5

Տասը տարվա ընթացքում Երևանի նահանգի քաղաքային բնակչությունը 57.594-ից հասնում է 81.509 մարդու՝<sup>33</sup> աճելով 41,5%-ով՝ կազմելով արդեն նահանգի բնակչության 9,83%-ը: Այս ամենամեծ քամբնը (14,268 մարդ) ընկնում է Երևանին, որի բնակչությունը նշված շրջանում ավելացել է 96,8%-ով: Տարեկան միջին աճը կազմում է 9,7%: Այս նման բարձր տոկոսը հեռու էր բնականից և բացատրվում է միայն մեխանիկական գործոնով: Միևնույն ժամանակ, այս աճն առերևույթ է, քանի որ 1886 թվականին հաշվի է առնվել մշտական, իսկ 1897 թվականին՝ առկա բնակչությունը:

1897 թվականին գործի թիվը Երևան քաղաքուն հասնում էր 2264 մարդու, մինչդեռ 1886 թվականին այն հաշվի չէր առնված: Մշտական և առկա բնակչության տարբերությունը, ըստ Զ.Կորկուտյանի հաշվարկների, կազմել է մոտ 5000 մարդ:<sup>34</sup> Եթե նույնիսկ այդ էլ նկատի չունենանք, աճը շարունակում էր մնալ բնականին բարձր և կազմում էր 9268 մարդ: Երևանի բնակչության նման աճի պատճառները մեխանիկականից բացի տնտեսական էին: Երևանն այդ շրջանուն Արևելյան Հայաստանի հիմնական տնտեսական կենտրոնն էր՝ միևնույն ժամանակ կապող օղակ հանդիսանալով Թուրքիայի և Պարսկաստանի հետ կատարվող առևտրական հարաբերություններուն:

Բարձր էին նաև Ալեքսանդրապոլի և Նախիջևանի բնակչության աճի տեմպերը (ավելի քան 26%), այն դեպքում, եթե Նոր Բայազետի բնակչությունն ավելացել էր 13,3%-ով, իսկ Օրդուբադին՝ ընդամենը 9,8%-ով՝ չկազմելով տարեկան նույնիսկ մեկ տոկոս: Քաղաքային բնակչության աճի հետևանքով մեծանում էր

Официальный свод по империи результатов разработки данных первой всеобщей переписи населения, произведенной 28 января 1897 г., т. 1, СПб., 1905, сс. 32-33.

<sup>33</sup> Մի շարք աղյուրներում Երևանի նահանգի քաղաքային բնակչությունը նշված է 92.323 մարդ, որը ճիշտ չէ: Հաշվարկված է նաև Շարուր-Դարալազյանի, Էջմիածնի և Սուրմալուի գավառական կենտրոններ Բաշնորաշենի (867 մարդ), Վաղարշապատի (5267 մարդ) և Իգդիրի (4680 մարդ) բնակչությունը, որոնք գյուղեր էին: Տես Процентное распределение наличного населения империи обоего пола по группам занятости, показанных при переписи главными, доставляющими главное средство существования, СПб., 1905, с. 16; Первая всеобщая перепись населения Российской империи, т. LXXI, Эриванская губерния, СПб., 1905, с. I. В сборнике статистических сведений по Закавказскому краю (ч. I, Тифлис, 1902, с. 19) утверждается 83.332 մարդ,որն ավելի մոտ է իրականությանը:

<sup>34</sup> Կորկուտյան Զ., Երևան քաղաքի ժողովրդագրությունը: Հարյուրամյա աճման պատկերը (1830-1930)՝ համադրված Անդրկովկասի մեջ քաղաքների հետ, Երևան, 1930, էջ 28:

նաև նրա տեսակարար կշիռը՝ 1886թ. 8,6%-ի փոխարեն 1897 թվականին կազմելով 11%: Նշենք, որ դեռևս 1886 թվականին Անդրկովկասում քաղաքային բնակչությունը կազմում էր ընդհանուրի 11%-ը, Եվրոպական Ռուսաստանում՝ 12%<sup>35</sup>-ը:

Դիտարկենք բնակչության դասային կազմը դարի 80 և 90-ական թվականներին:

Նահանգապետի 1886թ. հաշվետվության համաձայն Երևանի նահանգում կար ընդամենը 90.478 ծուխ՝ 667.464 բնակչությամբ<sup>36</sup>: Ծխերի 2,49%-ը (2250) և բնակչության 2,3%-ը (15,368, որից՝ 8046 տղամարդ) պատկանում էր արտոնյալ դասին: Նշված ծխերի մեջ մասը գտնվում էր գավառներում, իսկ նահանգի հինգ քաղաքներին բաժին էր ընկնում ընդամենը 622-ը<sup>37</sup>: 1886թ. ընտանեկան ցուցակագրության տվյալները հնարավորություն են տալիս ավելի մանրամասն քննարկել այդ հարցը: Ըստ այդ տվյալների՝ Երևանի նահանգում կային 1.978 ազնվականներ, 3.917 բեգեր ու աղալարներ և ընդամենը վեց մելիքներ: Նրանց ընդհանուր թիվը կազմել է 5.901 մարդ, որից 3.168-ը՝ արական, իսկ 2.733-ը՝ իգական սեռի: Նշված արտոնյալ դասերը նահանգում, ըստ գավառների, տեղաբաշխված էին հետևյալ քանակով (տե՛ս այսուսակ թիվ 7):

#### Այսուսակ 7<sup>38</sup>

Գավառներ	ազնվականներ		բեգեր, աղալար.		մելիքներ		միասին
	ար.	իզ.	ար.	իզ.	ար.	իզ.	
Երևանի	427	321	852	720	1	1	2322
Ալեքսանդրապոլի	182	196	7	13	-	-	398
Նախիջևանի	26	28	636	472	-	-	1162
Նոր Բայազետի	10	12	58	53	3	1	137
Սուլմանլուի	328	340	-	-	-	-	668
Շ. Ղարալազյանի	13	8	113	93	-	-	227
Էջմիածնի	45	42	467	433	-	-	987
Ընդամենը	1031	947	2133	1784	4	2	5901
	1978		3917		6		

Ինչպես Երևանը է այսուսակից, վեց մելիքներց չորսը բնակվել են Նոր Բայազետի, իսկ երկուսը՝ Երևանի գավառում: Ազնվականների, բեգերի ու աղալարների կազմը կազմում էր 1.978 մարդ, որից 3.168-ը՝ արական, իսկ 2.733-ը՝ իգական սեռի:

<sup>35</sup> Свод материалов по изучению экономического быта государственно-хозяйственных крестьян Закавказского края, т. IV, Тифлис, 1888, с. 421. Յայ Ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 21:

<sup>36</sup> РГИА СПб, ф. 1284, оп. 223, л. 214, л. 2.

<sup>37</sup> Ըստ “Օբзор Էրևանской губернии” за 1886 г. աղբյուրի տվյալների հիման վրա Ա. Յամբարյանի կտարած հաշվարկների: Տե՛ս նրա «Արևելյան Յայաստանի արտոնյալ դասի թվաքանակը ու ազգային կազմը XIX դարի երկրորդ կեսին». – Լրաբեր հասարակական գիտությունների, 1982, թիվ 6, էջ 46: Տե՛ս նաև Կիրակոսյան Գ. Լ., Արտոնյալ դասերը Արևելյան Յայաստանի բնակչության կազմում (XIX դ. 80-90-ական թվականներ): ԼՀԳ, 1986, թիվ 11, էջ 36-45:

<sup>38</sup> Այսուսակը կազմված է հետևյալ աղբյուրի տվյալների հիման վրա. “Свод статистических данных о населении Закавказского края, извлеченные из посемейных списков 1886 г.”, Тифлис, 1893.

րի 39,34%-ը (մելիքների հետ միասին 2322 մարդ) բնակվել են Երևանի գավառում:

Երկրորդ տեղում է Նախիջևանի գավառ՝ 1162 մարդ (19,69%), երրորդում՝ Էջմիածնի գավառ՝ 987 մարդ (16,74%): Բավականին մեծարիվ էր նաև Սուրբալուի գավառի ազնվականների թվաքանակը (գավառում բեգեր, աղալարներ և մելիքներ չեն բնակվում): Մնացած՝ Ալեքսանդրապոլի, Շարուր-Դարալագյազի և Նոր Բայազետի գավառներում բնակվում էին համապատասխանաբար 398 (6,74%), 227 (3,85%) և 137 (2,33%) մարդ:

Ազնվականները կազմում էին Երևանի նահանգի բնակչության մոտ 0,3%-ը, բեգերն ու աղալարները՝ 0,58%-ը, իսկ միասին՝ 0,88%-ը:

Ուսական առաջին մարդահամարի նյութերը հնարավորություն են ընձեռում դիտարկել արտոնյալների նշված խնճերում կատարված քանակական փոփոխությունները և բնակչության կազմում նրանց գրաված տեղը դարի վերջում:

Երևանի նահանգում 1897թ. եղել են 8.706 ժառանգական և 2.117 անձնական ազնվականներ: Ժառանգական ու անձնական պատվավոր քաղաքացիների թիվը հավասար էր 1.650 մարդու<sup>39</sup>: Ըստ գավառների թվարկված խավերը տեղաբաշխված են հետևյալ կերպ<sup>40</sup> (տես աղյուսակ թիվ 8):

#### Աղյուսակ թիվ 8

Գավառներ	Ժառանգական ազնվական:		անձն.ազնվ. և աստիճան.		Ժառ. և անձն. պատ.քաղ.		Միա- սին
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	
Երևանի	1470	1307	502	433	330	262	4304
Ալեքսանդրապոլի	492	407	243	252	233	217	1844
Նախիջևանի	778	702	153	136	59	54	1882
Նոր Բայազետի	120	117	28	26	162	147	600
Սուրբալուի	460	451	61	33	17	17	1039
Շ.Դարալագյազի	649	650	58	32	38	34	1461
Էջմիածնի	560	543	87	73	48	40	1351
	4529	4177	1132	985	887	771	
		8706		2117		1658	12.481

Ինչպես Երևում է աղյուսակից, բացարձակ թվաքանակով Երևանի գավառի ժառանգական, անձնական ազնվականները, պատվավոր քաղաքացիներն ու աստիճանավորները գրավում են առաջին տեղը՝ 4.304 մարդ, որը կազմում է ամբողջի 30,48%: Ազնվականության մոտ կեսը, աստիճանավորների ճնշող մեծամասնությունը բնակվում էին նահանգական կենտրոն Երևան քաղաքում: Նախիջևանի և Ալեքսանդրապոլի գավառներում նշված արտոնյալների թիվը կազմում էր 1.882 և 1.844 մարդ (15,07 և 14,78%-ը): Շարուր-Դարալագյազի գավառում բնակվում էր նրանց 11,70%-ը, Էջմիածնի և Սուրբալուի գավառներում՝ համապատասխանաբար 10,83 և 8,32%-ը: Բոլորից քիչ բաժին էր ընկնում Նոր Բա-

<sup>39</sup> Краткие общие сведения по империи. Распределение населения по главнейшим сословиям, вероисповедениям, родному языку и по некоторым занятиям, СПб, 1905, с. 18.

<sup>40</sup> Первая всеобщая перепись населения Российской империи ..., LXXI, Эриванская губерния, СПб, 1905, с. 30.

յազետի գավառին՝ ընդամենը 4,8%:

Ժառանգական, անձնական ազնվականներն ու պատվավոր քաղաքացիները, աստիճանավորները կազմում էին Երևանի նահանգի բնակչության 1,5%-ը: 80-ական թվականների համեմատությամբ ազնվականների թիվն ավելացել է: Ավելացել է նաև մնացած դասերի թիվը: Սակայն նահանգի բնակչության նկատմամբ եղած տոկոսային հարաբերությունը համարյա չի փոխվել: Եթե նկատի չունենաք ժառանգական և անձնական պատվավոր քաղաքացիներին, աստիճանավորներին, որոնք 80-ական թվականներին չէին հաշվառվել, ապա ժառանգական և անձնական ազնվականները դարի վերջին կկազմնեին բնակչության մոտ մեկ տոկոսը, որն այնքան էլ հեռու չէր 1886թ. համապատասխան ցուցանիշից (0,88%):

Արևելյան Հայաստանի բնակչության արտոնյալների թվում էր նաև հոգևոր դասը: Բնակչությունն ըստ սոցիալական կառուցվածքի դիտարկելու ժամանակ հոգևորականնությունն ընդգրկվում է մտավորականնության կազմում:

Հայ Եկեղեցին, հոգևորականնությունը, անկախ նվաճողներից, միշտ էլ գտնվել են համեմատաբար արտոնյալ պայմաններում: Դարեր շարունակ հայ ժողովրդի պետականնությունից գուրև լինելը նպաստել է Եկեղեցու ու հոգևորականնության դերի և հեղինակության բարձրացմանը, արտոննությունների ընդլայնմանը:

Ցարական իշխանությունը, ձգտելով Եկեղեցու միջոցով անրապնդել իր դիրքը Արևելյան և Արևմտյան Հայաստանում, ազդեցության տակ պահել այլ երկրների հպատակության տակ գտնվող հայերին, ոչ միայն պահպանեց Եկեղեցու, հոգևորականնության արտոննությունները, այլև նրանց շնորհեց որոշակի իշխանություն, որոնք իրենց արտացոլումը գտան 1836թ. Նիկոլայ 1-ի կողմից վավերացված «Պոլոտենիե» - ում<sup>41</sup>:

Հայ հոգևորականնությունը «Պոլոտենիե»-ի համաձայն ազատվում էր մարմնական պատիճներից, հարկերից և զանազան այլ պարտականություններից՝ դառնալով Ռուսական կայսրության արտոնյալ դասերից մեկը: Յոգևորականնության սոցիալ-հրավական այդ վիճակը պահպանվել էր նաև XIX դարի 80-90-ական թվականներին:

Արտոնյալների դասում էր նաև մահմեդական հոգևորականնությունը, որոնց թիվը քիչ չէր Արևելյան Հայաստանում: Հրատարակված և արխիվային տվյալները մեզ հնարավորություն են տալիս որոշել նրանց թվաքանակը, տեղաբաշխութը և տեսակարար կշիռն ընդհանուր բնակչության կազմում:

Արևելյան Հայաստանի շրջաններից Երևանի նահանգում, 1886թ. ընտանեկան ցուցակագրության տվյալներով, եղել են ընդհանունը 7.707 հոգևոր դասին պատկանողներ, որոնցից արական սեօն՝ 4.172-ը, իգական՝ 3.535<sup>42</sup>:

Յոգևոր դասի ընդհանուր թվաքանակում ճնշող մեծամասնություն են կազմել հայ Գրիգորյաններ՝ 6.841 (3.677 տղամարդ և 3.164 կին)՝<sup>43</sup>:

Հայ կաթոլիկները կազմել են փոքրամասնություն՝ 56 տղամարդ և 41 կին, ըն-

<sup>41</sup> Մանրամասն տես՝ Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Երևան, 1974, էջ 112-115:

<sup>42</sup> Свод статистических данных о населении Закавказского края ..., Тифлис, 1893 г.

<sup>43</sup> 1886 թ. ընտանեկան ցուցակագրության ժամանակ հայ հոգևոր դասին պատկանող կանաց թիվը նշված է 3164, որը սխալ է:Տես՝ նշված աղբյուրի “Свод населения по городам и уездам Эриванской губернии” բաժինը:

դամենը՝ 97 մարդ: Փոքրաթիվ էր նաև ուղղափառ հոգևորականությունը՝ ընդամենը 59 մարդ (38 տղամարդ և 21 կին): Մնացած հոգևորականները պատկանուն էին նահմեդական շիա՝ 691 մարդ և սյունի՝ 19 մարդ աղանդներին, ընդամենը՝ 710 մարդ:

Հայ Գրիգորյանները կազմում էին Երևանի նահանգի բնակչության 1,02%-ը, հայ կաթոլիկ ու ուղղափառ հոգևորականները՝ 0,01%-ը: Մի փոքր ավելի էր նահմեդական հոգևորականության տեսակարար կշիռը, որը հավասար էր 0,1%-ի: Ընդհանուր առնամբ, բոլոր դավանանքի հոգևորականները կազմում էին Երևանի նահանգի բնակչության 1,14 %-ը:

Երևանի նահանգի հոգևոր դասի 26,17%-ը բնակվում էր Ալեքսանդրապոլի, 21,38%-ը՝ Էջմիածնի գավառներում: Երևանի գավառում բնակվում էր 18,65%-ը: Բազմաթիվ էր նաև Նախիջևանի գավառի հոգևոր դասը՝ 12,20%: Նահանգի մնացած՝ Նոր Բայազետի, Սուրմալուի և Շարուր-Դարալազյազի հոգևոր դասի մերկայացուցիչները համեմատաբար փոքրաթիվ էին: Նրանց քաֆին էր ընկնում հանապատասխանաբար 8,54, 7,05 և 6,01%-ը:

Ուստական առաջին մարդահամարի նյութերը հնարավորություն են տալիս քննարկել հոգևոր դասի թվակազմի փոփոխությունները XIX դարի 90-ական թվականների վերջին:

Երևանի նահանգում 1897թ. եղել է քրիստոնյա հոգևոր դասին պատկանող 6.531 մարդ, որից քաղաքներում բնակվել են 1.078-ը<sup>44</sup>: Նշված թվաքանակից 3.422-ը եղել են արական սեօթ, 3.109-ը՝ իգական<sup>45</sup>: Ինչպես 80-ական, այնպես էլ 90-ական թվականներին հոգևոր դասը մեծաթիվ էր Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառում՝ 18,50%: Նոր Բայազետի գավառին բաժին էր ընկնում ընդհանուրի 12,04, իսկ Նախիջևանին 10,98%-ը: Յամենատաբար սակավաթիվ էր Սուրմալուի և Շարուր-Դարալազյազի հոգևոր դասը (6,92 և 4,87%)<sup>46</sup>:

Եղած վիճակագրական նյութերը հնարավորություն չեն տալիս պարզել նահմեդական և այլ հոգևոր դասի թիվն ըստ գավառների, սակայն նահանգում նրանց թվաքանակը կազմել է 1032 մարդ<sup>47</sup>:

Այսպիսով, Երևանի նահանգի հոգևոր դասի ընդհանուր թիվը կազմում է 7.563 մարդ<sup>48</sup> կամ բնակչության 0,91%-ը: Դարի 80-ական թվականների հետ համեմատած հոգևոր դասը ոչ միայն չի աճել, այլև նվազել է բացարձակ քանակով (44 մարդ), հետևապես նաև բնակչության նկատմամբ ունեցած տոկոսային հարաբերությամբ (0,22%):

Արևելյան Յայաստանի բնակչության հարկատու դասերից էր նաև վաճառա-

<sup>44</sup> “Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 г., LXXI, Эриванская губерния”, СПб, 1905, с. 2.

<sup>45</sup> Սույն տեղում, էջ 30:

<sup>46</sup> Յաշվարկները կատարված են Վերոհիշյալ աղբյուրների հիման վրա:

<sup>47</sup> “Распределение населения по главнейшим сословиям ...”, СПб, 1905, с. 27. Первая всеобщая перепись ..., - LXXI, Эриванская губерния, с. 104.

<sup>48</sup> Ըստ Խոջաբեկյանի՝ եղել է 4646 մարդ, որը չի համապատասխանում իրականությանը: Տես Յայաստանի բնակչությունը և նրա գրաղվածությունը, էջ 161:

կանությունը: Զնայած մի շարք աշխատություններում հեղինակներն անդրադարձել են այդ դասին, այս կամ այն կերպ գնահատել տնտեսական կյանքուն նրա խաղացած դերը, այնուամենայիվ արևելահայ վաճառականության դերը դեռևս թույլ է ուսումնասիրված: Ինչ վերաբերում է վաճառականության թվաքանակին, նրա՝ որպես ինքնուրույն դասի՝ բնակչության կազմում XIX դարի վերջում գրաված տեղին, ապա դրան անդրադարձել է միայն պատմաբան Ա. Չամբարյանը<sup>49</sup>:

Արևելյան Հայաստանի միացումից հետո ոուսական վաճառականությանը վերաբերող օրենսդրական ակտերը տարածվեցին նաև տեղական վաճառականության վրա: Ոուսական կայսրությունում, բնական է՝ նաև Արևելյան Հայաստանում, սկսած XIX դարի 60-ական թվականներից վաճառականական դասը բաժանվում էր երկու գիլդայի<sup>50</sup>, որոնցում գրանցվելու համար հարկավոր էր ունենալ վկայական՝ վճարելով համապատասխան անդամավճար: Վաճառականությունը միակ դասն էր, որում գրանցվելու համար պետք է վճարվեր որոշակի գումար:

1898թ., նոր օրենքի ընդունումից հետո, վաճառականական դասին պատկանելն արդեն անկախ դարձավ տնտեսական գործունեությունից և կապված էր միայն դասային վկայագիր վերցնելու հետ<sup>51</sup>, որը բնականաբար հանգեցրեց այդ դասի բացարձակ թվի նվազմանը: Շատ ավելի նվազեց նրա տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվակազմում:

1886թ. տվյալներով Երևանի նահանգում վաճառականական դասին պատկանում էր 2.539 մարդ, որից արական սեռի՝ 1.301, իգական՝ 1.238<sup>52</sup>: Վաճառականական դասից ընդհանունը 244-ը էին բնակվում գավառներում, իսկ մնացած 2.295-ը՝ նահանգի քաղաքներում: Ընդ որում, քաղաքաբնակների 74,20%-ը բաժին էր ընկնում Ալեքսանդրապոլին և միայն 25,80%-ը՝ մնացածներին: Ընդհանուր առմամբ վաճառականության դասը կազմում էր Երևանի նահանգի բնակչության 0,38%-ը:

Դարի վերջին վաճառականական դասի թիվն Արևելյան Հայաստանում գնալով պակասում էր, չնայած առևտուրը և արդյունաբերությունը վերելք էին ապրում: Երևանի նահանգի այդ դասի թիվը կրճատվում է մոտ 60%-ով, կազմում էն-

<sup>49</sup> Տե՛ս **Ա. Չամբարյան**, Արևելյան Հայաստանի արտոնյալ դասի թվաքանակն ու ազգային կազմը 19-րդ դարի երկրորդ կեսին. – Լրաբեր հասարակական գիտությունների, 1982, թիվ 6, էջ 43-52:

<sup>50</sup> Сюда вступали, преобратив гильдейские свидетельства при одновременной покупке и промысловых: “Для первой гильды – на торговые предприятия первого разряда, или на промышленное предприятие одного из трех разрядов, или пароходное предприятие, за содержание которого уплачено в год более 500 руб. основного промыслового налога; для второй – соответственно на торговое предприятие второго разряда или промышленное – четвертого и пятого разрядов, или на пароходное за содержание которого уплачено от 50-500 руб. основного промыслового налога в год” (Свод законов Российской империи, т. IX, СПб, 1899, сс. 532-533). – **Боханов А. Н.**, Российское купечество в конце XIX – начале XX века. – История СССР, 1985, N 4, сс. 106-107.

<sup>51</sup> ՊԾՀՐԻ, տ. IX, ս. 531.

<sup>52</sup> Свод статистических данных о населении Закавказского края ..., Тифлис, 1893 թ.

դամենը 1014 մարդ՝ 492-ը՝ արական, 522-ը՝ իգական սեռի<sup>53</sup>: Ինչպես 80-ական թք., այնպես էլ դարի վերջին վաճառականության ճնշող մեծամասնությունը բնակվում էր նահանգի քաղաքներում, իսկ քաղաքներից էլ՝ Ալեքսանդրապոլս:

Բնակչության հիմնական մասը բաժանվում էր քաղքենիների և գյուղացիության դասերի<sup>54</sup>: XIX դարի 80-ական թվականներին Երևանի նահանգում քաղքենիները բնակվում էին Երևան և Ալեքսանդրապոլ քաղաքներում՝ 33.526 մարդ ընդհանուր թվաքանակով, որից արական սեռի՝ 17.371, իսկ իգական՝ 16.155 մարդ:

90-ական թվականներին քաղքենիների դասն ավելանում է ոչ միայն բացարձակ թվով, այլև բնակչության նկատմամբ ունեցած տոկոսային հարաբերությամբ: Նրանք սկսում են բնակություն հաստատել ոչ միայն այլ քաղաքներում, այլև գավառներում և օկրուգներում:

1897թ. մարդահամարի տվյալների համաձայն քաղքենիներ կային արդեն Երևանի նահանգի բոլոր քաղաքներում և գավառներում՝ 54.222 մարդ ընդհանուր թվաքանակով, որից 28.143-ը՝ արական, 26.079-ը՝ իգական սեռի: Նրանցից 1.595-ը բնակվում էին գավառներում, իսկ մնացած ճնշող մեծամասնությունը՝ նահանգի քաղաքներում<sup>55</sup>, կազմելով ընդհանուր բնակչության 6,54%-ը:

Ընդհանուր առնամբ Արևելյան Հայաստանում քաղքենիների դասն աշխատանքի հասարակական բաժանման, բնակչության ընդհանուր թվաքանակում քաղաքային բնակչության տոկոսային հարաբերության բարձրացման, բնական աճի հետևանքով ավելանում էր և մեծանում էր նրա տեսակարար կշռը:

Գյուղացիության դասն ըստ իր թվաքանակի և տեսակարար կշռի ամենաբազմարդն էր Արևելյան Հայաստանում, բնականաբար և Երևանի նահանգում, բաժանվում էր մի քանի ենթադասերի կամ կատեգորիաների, որոնցից ամենամեծը պետական գյուղացիությունն էր: Գյուղացիության դասի մյուս ենթադասերը՝ նույթադարական, թիուղարական, տերունական, սեփականա-տիրական, վանքապատկան և այլն, իրենց թվակազմով շատ էին զիջում պետականին:

Գյուղացիության նշված կատեգորիաները միշտ էլ եղել են պատմաբանների ուշադրության կենտրոնում: Նրանց իրավունքները, պարտականությունները, տնտեսական դրությունը լուսաբանվել են բազմաթիվ ուսումնասիրություններում: Հեղինակներից շատերը անդրադարձել են նաև գյուղացիության դասի կատեգորիաների թվին, նրանց հարաբերությանը: Սակայն, հենվելով տարբեր աղբյուրների վրա, շատ դեպքերում չնշելով ուսումնասիրման տարածքային սահմանները, շրջանառության մեջ են դրել տարբեր, երբեմն իրար հակասող թվական տվյալներ, որոնք գալիս են, իհարկե, նախ և առաջ աղբյուրներից:

<sup>53</sup> “Первая всеобщая перепись населения Российской империи ...”, 1897 г., LXXI, Эриванская губерния, СПб, 1905, с. 30. Այդ երկութը նկատելի էր նաև Ուսումնականում և կապված էր 1898 թվականին ընդունված օրենքի հետ, որի համաձայն վաճառականական դասին պատկանելը դարձավ անկախ տնտեսական գործունեությունից:

<sup>54</sup> Տե՛ս Կիրակոսյան Գ., Քաղքենիների և գյուղացիության դասերը Արևելյան Հայաստանում XIX դ. 80-90-ական թվականներին: ԲՀԱ, 1986, թիվ 2, էջ 117-131:

<sup>55</sup> “Первая всеобщая перепись населения Российской империи ..., 1897 г., LXXI, Эриванская губерния”, СПб, 1905, с. 30.

1883 թվականին Անդրկովկասի հինգ նախանգների պետական ունեցվածքն անցավ համապատասխան նախարարության տնօրինությանը: 1884-1885թթ. և մասնակիորեն 1886թ. պետական ունեցվածքի նախարարությունը ենթակա գյուղացիության ճշգրիտ թվաքանակը, դրությունն ուսումնասիրելու համար կազմակերպեց հատուկ խումբ, որի հավաքած տվյալները հետագայում հրատարակվեցին:

Երևանի նախանգի պետական գյուղացիությունը կազմավորվեց նախկին շահական-խանականից, որոնց թիվը հետագայում ավելացավ Արևանտյան Հայաստանից, Ռուսաստանի Ենթակա նախանգներից կատարված տեղափոխումների հաշվին: 1884-1885 թթ, ըստ պետական ունեցվածքի նախարարության տվյալների, նախանգի պետական հողերում կար 955 բնակավայր, որոնցից 800-ը գյուղեր էին: Այդ գյուղերից 732-ը մաքուր պետական էին, 68-ը՝ պետական-մուլքադարական: Մնացած 155-ը քրդերով և թաթարներով բնակեցված քոչվորական բնակավայրեր էին, որոնցից մեկը նույնաես պետական-մուլքադարական էր<sup>56</sup>: Նշված բնակավայրերն ըստ գավառների տեղաբաշխված էին հետևյալ տոկոսային հարաբերությամբ<sup>57</sup>:

Առլրմալուի	18,45%
Էջմիածնի	17,19%
Ալեքսանդրապոլի	16,77%
Երևանի	15,41%
Շարուր-Դարալազյագի	13,10%
Նոր Բայազետի	13,00%
Նախիջևանի	6,08%

Ինչ վերաբերում է բնակավայրերում եղած ծխերի քանակին և բնակչության թվակազմին, ապա տվյալներն այնքան էլ հավաստի չեն: Ծատ դեպքերում բնակչությունը թաքցնում, հատկապես ծխերի մասին նվազեցված տվյալներ էր տրամադրում ուսումնասիրողներին, որի համար վերջիններս հաճախ են դժգոհել<sup>58</sup>: Ուստի նվազեցնան տվյալներով Երևանի նախանգի պետական գյուղացիները կազմել են 53.118 ծուխ՝ 447.729 երկսեռ բնակչությամբ<sup>59</sup>:

1886թ. անցկացված ընտանեկան ցուցակագրության տվյալները շատ ավելի ամբողջական են և հավաստի: Ըստ այդ տվյալների՝ Երևանի նախանգում եղած 90.918 ծխերից պետական էին 67.671-ը՝ 525.162 երկսեռ բնակչությամբ<sup>60</sup>, որը կազմում էր ընդհանուր բնակչության 78,34%-ը: Ինչպես տեսնում ենք, 1886թ. թե՛ ծխերի և թե՛ բնակչության թիվը շատ ավելի է և դժվար է այդ բացատրել միայն բնական աճով կամ տեղափոխումներով: Ավելի շուտ դա հավաստում է, որ մեկ-երկու տարի առաջ պետական ունեցվածքի նախարարության հավաքած տվյալ-

<sup>56</sup> *Парвицкий А. В.*, Численный состав государственных крестьян. – Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края, т. II, Тифлис, 1887, с. 106.

<sup>57</sup> Սույն տեղում, էջ 108:

<sup>58</sup> Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, т. I, Тифлис, 1886, с. 479.

<sup>59</sup> Свод материалов ..., т. II, Тифлис, 1887, с. 103.

<sup>60</sup> “Свод статистических данных о населении Закавказского края ...”, Тифлис, 1893 г.

Աերճ ամբողջական չեն եղել:

Երևանի նահանգում պետական գյուղացիությունը գավառների բնակչության նկատմամբ ուներ հետևյալ տոկոսային հարաբերությունը<sup>61</sup>:

1. Նոր Բայազետի	89,47
2. Ալեքսանդրապոլի	80,69
3. Սահմիջևանի	78,06
4. Էջմիածնի	75,99
5. Շարուր-Դարալագյազի	74,57
6. Երևանի	73,66
7. Սուրբալուի	71,98

Ընդհանուր առնամբ, 80-ական թվականների կեսերին Արևելյան Հայաստանի պետական գյուղացիները «կազմում էին 105.051 տնտեսություն (827.623 մարդ) և հանդիսանում գյուղական բնակչության ճնշող մեծամասնությունը (72,0%)»<sup>62</sup>:

Արևելյան Հայաստանի գյուղացիության մնացած 28%-ը բաժին էր ընկնում կալվածատիրական և սեփականատիրական հատվածներին:

Կախված ֆեոդալական հողատիրության ձևից և պետական անվանումներից, Երկրի տարբեր շրջաններում «նրանք հայտնի են մուլքադարական, պետական-մուլքադարական, թիուլդարական, վաճրապատկան, թիուլա-մուլքադարական (Երևանի, Էջմիածնի, Սուրբալուի և Նոր Բայազետի գավառներում), բեգական, աղալարական, մելիքական (Զանգեզուրի, Շուշիի, Ղազախ-Շամշադինի գավառներում), խիզանական (Լոռիում) և այլ անուններով»: 1870թ. ռեֆորմից հետո այդ գյուղացիների մեծ մասը պաշտոնապես արդեն կոչվում էր «ժամանակակից պարտավորյալներ»<sup>63</sup>:

Նշված ենթադասերից թվաքանակով մեծ էր մուլքադարական գյուղացիությունը, որոնք բնակվում էին Երևանի նահանգի չորս գավառներում: Արևելյան Հայաստանի մնացած շրջաններում այդ ենթադասը բացակայում էր: Ըստ 1886թ. Ընտանեկան ցուցակագրության՝ Երևանի գավառում մուլքադարական գյուղացիության թիվը հասնում էր 12.401 մարդու, որը կազմում էր բնակչության 10,95%-ը: Շատ ավելի մեծաքիվ էր այդ կարգը Սուրբալուի գավառում՝ 18.652 մարդ, կամ բնակչության 26,26%-ը, Շարուր-Դարալագյազի գավառում՝ ընդամենը 2.576 մարդ՝ 4,17%: Էջմիածնի գավառում մուլքադարական գյուղացիությունը կազմում էր բնակչության 11,23%-ը՝ 11.299 մարդ: Գյուղացիության այդ կարգը ընդհանուր առնամբ կազմում էր Երևանի նահանգի բնակչության 6,70%-ը՝ 44.928 մարդ ընդհանուր թվաքանակով<sup>64</sup>: Գյուղացիության նշանական մեջ էր մտնում նաև Էջմիածնի վաճրապատկան գյուղացիությունը:

Աղայական, մելիքական, բեգական և կալվածատիրական այլ խմբերի գյուղացիությունը 1886թ. ցուցակագրությամբ հաշվարկված է “տերունական” ընդ-

<sup>61</sup> Հաշվարկը կատարված է նույն աղբյուրի տվյալների հիման վրա:

<sup>62</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 34: Տես նաև **Ա. Համբարյան**, Արևելյան Հայաստանի գյուղացիության սոցիալական կազմը XIX դարի Երկրորդ կեսին: Պատմաբանասիրական հանդես, 1984, թիվ 1, էջ 111-112:

<sup>63</sup> Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 40:

<sup>64</sup> «Свод статистических данных о населении Закавказского края ...», Тифлис, 1893 г.

հանուր անվան տակ:

Երևանի նահանգում տերունական գյուղացիությունը բնակվում էր Շարուր-Դարալազյաղ (12.436), Նախիջևանի (3.047) և Նոր Բայազետի գավառներում (2.762), որոնք կազմում էին նահանգի բնակչության 2,72%-ը (18.245 մարդ)<sup>65</sup>.

Տնտեսապես ինքնուրույն, սեփականատեր գյուղացիությունը Արևելյան Հայաստանում շատ փոքրաքանակ էր: Երևանի նահանգում նրանք բնակվում էին Նախիջևանի (2795) և Էջմիածնի գավառներում (42 մարդ)` կազմելով նահանգի բնակչության 0,42%-ը:

Դարի վերջին գյուղացիության դասը բնական աճի, 1895–1896 թթ. կոտորածներից հետո Արևմտյան Հայաստանից կատարված ներգաղթի, Ռուսաստանից և այլ շրջաններից տեղափոխությունների հաշվին գնալով ավելանում էր:

1897թ. մարդահամարի տվյալների համաձայն Երևանի նահանգում այդ դասում արդեն հաշվում էր 737.080 մարդ<sup>66</sup>, որը կազմում էր բնակչության 88,85%-ը, XIX դարի 80-90-ական թվականներին էլ գյուղացիության դասը շարունակում էր մեծարիվ մնալ Արևելյան Հայաստանի բնակչության շրջանում, շատ անգամ գերազանցելով մնացած դասերը միասին վերցրած: Սակայն այդ դասը միաժամանակ, արտադրական հարաբերությունների հետագա զարգացման, գյուղատնտեսության ապրանքայնացման և այլ պատճառներով, շերտավորվում, բեռնացվում էր, ծնունդ տալով բուրժուական հասարակության դասակարգերին:

Այսպիսով, Երևանի նահանգում արտոնյալ դասերը XIX դարի II կեսին չնայած շարունակում էին քանակապես ավելանալ (1864թ.՝ 9.039 մարդ, 1886թ.՝ 13.608 մարդ, 1897թ.՝ 18.386 մարդ), նրանց տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր քանակում մնում էր ըստ էության նույնը՝ 2-2,22%: Այդ նույն ժամանակահատվածում հարկատու դասերը քանակապես աճել են մոտ կրկնակի անգամ:

## СЛОИ В СОСТАВЕ НАСЕЛЕНИЯ ЭРИВАНСКОЙ ГУБЕРНИИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ XIX ВЕКА

Г. Л. КИРАКОСЯН

Во второй половине XIX века почти половина территории оккупированной русской империей были включены в составе Эриванской губернии. Во время создания губернии в 1850 году, она была впервые разделена на пять, а позднее на семь уездов.

В 1864 году общее число населения было 430.716 человек, из которых 44.402 были горожанами. В 1886 году общее количество было 670.405 человек, из которых 57.994 были горожанами, а в 1897г. их число составило 829.556 человек, из которых 81.509 были горожанами.

В Российской империи, естественно и в Эриванской губернии, население было разделено на слои, освобожденных от налогов и повинностей - привилегированных и непривилегированных налогоплательщиков. В середине 1860 года число привилегированных слоев, свободных от налогов (ханы, бегги, мелики, духовенство и т.д.) составляло 12.019, или 2,79% населения. Если не учитывать 2.400 государственных крестьян, которые были также освобождены от налогов и повинностей, численность привилегированного слоя будет 9.039, что составит немного более 2% населения. Налогопла-

<sup>65</sup> «Свод статистических данных о населении Закавказского края ...», Тифлис, 1893 г.

<sup>66</sup> «Первая всеобщая перепись населения ..., LXXI, Эриванская губерния», СПб, 1905, с. 30.

тельщики потомственных и личных граждан, купечество, государственных, мулкадарских, тиульских, монастырских, собственнических и других категорий крестьян составляли большинство населения - менее чем 98%.

Согласно с посемейным списком, в 1886 году численность привилегированного слоя составляло 13.608 человек, или 2,03% населения, а по данным переписи 1897 года, это число составило уже 18.386 человек, что было 2,22% населения. Большинство населения, около 98%, по-прежнему являлось налогоплательщиками (почетные и личные граждане, мещане, купечество и крестьянство со своими подслоями).

## LAYERS IN POPULATION OF ERIAN PROVINCE IN THE SECOND HALF OF XIX CENTURY

**G. L. KIRAKOSYAN**

In second part of XIX century half of the territories occupied by the Russian Empire were in the Erivan province. During The creation of the province in 1850, it was first divided into five, and later seven provinces.

In 1864 the total number of population was 430.716 people, of which 44.402 were citizens. In 1886 the total number was 670.405 people, of which 57.994 were citizens, and in 1897 the number was 829.556 people, of which 81.509 were citizens.

In Russian Empire (obviously, Erivan province included, because it was a part of the empire) population was divided into classes, where some of them were free of taxes and obligations and some were certainly not. In the middle of 1860 the number of people in the tax free class was 12.019 (khans, bags, meliks, the religious class, etc.), which was 2,79% of population. If we avoid the 2.400 villagers in this number, who were also free of taxes and obligations, the number of people in the privileged class would be 9039, which is slightly more than 2% of the population. The taxpayers were the majority of the population - 98%.

According to the family registers, in 1886 the number of people in the privileged class was 13.608, which was 2,03% of the population, and according to census of 1897, that number was 18.386, which was 2,22% of population. The majority of population, around 98%, were still the taxpayers (by inheritance, honorable citizens, tradesmen, merchants and peasants with their subclasses).

## ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍԸ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԻՆՔՆԱԳՈՐԾՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

**Գ. Լ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

*Պատմական գիտությունների թեկնածու, դրենս*

XIX դարի երկրորդ կեսին Ռուսական կայսրության, բնական է՝ նաև Արևելյան Հայաստանի բնակչությունը շարունակում էր բաժանված մնալ դասերի:

Կապիտալիստական հասարակությունում դասերը, որպես ինքնուրույն միավոր, չեն հետազոտվում, սակայն նրանք, որպես իրականություն, պահպանում են իրենց նշանակությունը հասարակության սոցիալական կառուցվածքի փոփո-